ճիներուն եկեղեցին պատարագեմ. խնդրեցի ի նոցանէ թէ միայն գիշերն մին տեղ տուէք ինձ վասն ննջելոյ. ասացին ոչ գոյ. ահ մին օտայ նստած ենք ես և փոքրաւորն. ամիսն երեք օսկի. աստուած օրհնէ այս տղան. եթէ սա ոչ լինէր, չափէն ի դուրս ողորմելի լինէի։ Ձայսքան անձ անձին ի գլուխս մեր. բայց զապագայն ոչ գիտեմք թէ զինչ լինելոց է. քանզի ասեն թէ եթէ բէլբրդատ տաճիկն առնու, վարատին կենալն հնար չէ...։

Գերյարգելութեան քում Ծառայ պատրաստական յամենայնի

1739 Օգոստոսի ԺԵ — Նուաստագունեղ ծառայ

Ծրեցաւ ի Վարատին — Հայր Յակոբ ողորմելի

ՂԳ.

Այլեւ Թուրք – Աւստրիական պատերազմի վերջաբանն է, որ խնամքով կը նկարագրուի Հ. Թ. Յովհաննիսեանի նամակին մէջ։

Պատմութիւնը կ՝աւանդէ որ մեր նամակագրին յիշատակած երկու աւստրիացի զօրավարները՝ Վալլիս և կոմս Նայփէրկ՝ կը բանտարկուին կայսեր հրամանաւ, որովհետև անմիջապէս զիջաներ էին Պելկրատու հաշտութեան համար Օսմանցւոց կողմանէ գրուած անարգ պայմաններուն։

Նամակագիրս կու տայ նաև ուրիշ հետաքրքրական տեղեկութիւններ։

Օ[ռնեալ]։ Յ[իսուս]։ Ք[րիստոս]։

Գերապայծառի և գերյարգելոյ Տեառն Մխիթարայ Աբբայի Հօրդ մերում ընդհանրական մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զորդիական ողջոյն և գենազանդութիւն։

. . . ի 7 սեպտեմբերի թաղեցաք զեպիսկոպոսն ի պէլիկրատն, (որ այլով անուամբ Գարօլինայ կոչի) և անդ էր վերոգրեալ [Էլիզապէթապոլսեցի | Տէր Մինասն ևս...։ Ես թերեւս զկնի սակաւուց խնդրելոց եմ զգերակոյտն, զի զվկայութիւն գրիցեն վասն իմ, բայց այժմ ոչ իշխեմ, զի են ի մեծի ալէկոծութեան շուրջ զDominiumիւն, քանզի որպէս ըստ առակին, Chi compra terra, compra guerra. *այսպէս սոքա յորմէ հետէ գնեցին զՏօմինիումն* 101000 *տուգաթով, ոչ ունին զխաղաղութիւն և զհանգիստ, այլ միշտ են ի խռովութիւնս և յաղմուկս։ Եւ ինքեանք վկայեն, թէ յառաջ քան զտիրանալ նոցա տօմինիումին, հանգիստ, ուրախ, և խաղաղ և միաբանք էին քաղաքացիքն, բայց այժմ ներհակն։ Այլ նորագոյն լուր ոչ գոյ աստ վասն անցելոց պատերազմաց, քանզի ասեն թէ խաղաղութիւն է. այսու դաշամբ, զի զպէլիկրատն աւերիցեն, և աւերեալ տայցեն ի ձեռս տաճկաց, և այսու պայմանաւ, զի զբերդն յաւիտեան ոչ շինիցեն տաճիկք, այլ այնպէս աւերեալ թողցեն. և այս զամս* 26. *ըստ ոմանց զամս* 24, *և ըստ այլոց զամս* 28։ *Եթէ այսպէս իցէ՝ ընդհանրական խաղաղութիւն է, և մանաւանդ քայքայումն է քրիստոնէութեան քան թէ խաղաղութիւն։ Լուաք թէ Սրբազան Փափն և ամենայն եկեղեցականք, նաև ամենայն* Elector*ք ոչ կամին ընդունիլ զորոգայթաւոր խաղաղութիւնս զայս, և ասեն թէ* 2 *կենէրալք, այսինքն Վալիսն և Նայպէրկն են ի բանտի ի Վիեննա, վասն կաշառակուծութեան. նաև* 6 *կենէրալք են ի կոստանդինուպոլիս ի պահեստի առ տաճիկսն, որպէս զի եթէ կայսրն մեր եղծիցէ զդաշինս կռեցեալս՝ հատցեն զգլուխս նոցա. յանցեալ շաբաթու ասէին թէ զ*6000 *տաճիկս սրախողխող արարեալք իցեն ի Պէլկրատն, և զայլ անթիւ սուտս ասեն իբրև զճշմարիտս, և յետ սակաւուց այլք ստեն զյառաջագոյն ասացեալսն։ ... նաև ճանապարհքն փակք են դեռ ևս։* 7 *ամիս է, յորմէ հետէ վաճառական ոմն Ովանէս Վասիլեան կոչեցեալ, յորոց զկրտսեր եղբայրն*